ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻԱԶԳԱՅԻՆԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԱՏՅԱՆ ԱՐԱ ԿԱՄՈՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Է.00.05«Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է **ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:**

Գիտական ղեկավար՝**ՀՀԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ.,պրոֆ. Սիմոնյան Արամ Հրաչիկի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հակոբյան Արարատ Մխիթարի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ալեքսանյան Կարինե Վանիչկայի

Առաջատար կազմակերպություն՝**Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. նոյեմբերի 17-ին, ժամը 14^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ՀՀ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյանպող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հոկտեմբերի 5-ին:

Մասնագիտականխորհրդիգիտականքարտուղար,
պատմականգիտություններիթեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆԸՆԴՀԱՆՈՒՐԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության գիտական նշանակությունն ու արդիականությունը: Խորհրդային իշխանության տարիներին պատմագիտությունը Հայաստանում գտնվում էր գաղափարական կապանքների մեջ և չուներ զարգացման լայն հնարավորություններ: Դա էր պատճառը, որ Հայոց պատմության քաղաքական բնույթի մի շարք հարցեր ոչ միայն շրջանցվել են խորհրդահայ պատմաբան-ուսումնասիրողների կողմից, այլև միտումնավոր խեղաթյուրվել կամ հարմարեցվել են իշխող գաղափարախոսությանը: Իրավիճակը կտրուկ փոխվեց Հայաստանի անկախացումից հետո, երբ մեր պատմաբանների համար լայն հնարավորություններ ստեղծվեցին շարադրելու անաչառ ու անկողմնակալ պատմություն, բայց դա չէր նշանակում, որ հայ ժողովրդի պատմության բոլոր հիմնահարցերը ստացան իրենց սպառիչ պատասխանները: Այսօր էլ կան որոշ խնդիրներ, որոնք պատմագրության մեջ հակասական գնահատականների են արժանացել և նորովի արժևորման կարիք ունեն: Դրանցից մեկը Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցն է, որի վերաբերյալ թե՛ Հայաստանում և թե՛ Սփյուռքում ստեղծվել է հուշագրական և պատմագիտական հարուստ գրականություն: Չնայած այն հանգամանքին, որ այս հիմնահարցի վերաբերյալ խորհրդային և անկախության շրջանում բավական գրվել է՝ կարծում ենք, որ դրա ուսումնասիրությունը և պատմագիտական վերլուծությունը ոչ միայն չի կորցրել իր գիտական նշանակությունը, այլև շարունակում է մնալ արդիական: Մինչ օրս չի ստեղծվել վերոնշյալ հիմնահարցի պատմության՝ խորհրդահայ, սփյուռքահայ և անկախության շրջանի հայկական պատմագրությունը ներկայացնող ամփոփ մի ուսումնասիրություն, ուստի սույն ատենախոսությունը գալիս է լրացնելու այդ բացը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է պատմագիտական սկզբունքներին ու մեթոդներին համահունչ ներկայացնել, վերլուծել և մեկնաբանել Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի վերաբերյալ խորհրդահայ, սփյուռքահայ և անկախության շրջանի հայկականպատմագրության ներկայացուցիչների կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքներն ու գնահատականները, վեր հանել նրանց թույլ տված սխալները, թերություններն ու բացթողումները, ինչպես նաև ուրվագծել հետագա ուսումնասիրության հնարավոր միտումները: Այդ նպատակն իրականացնելու համար փորձել ենք համակարգված ներկայացնել և վերլուծել հետևյալ խնդիրները.

- հայ պատմագրության մեջ մայիսյան ապստամբությանը տրված հակասական գնահատականները,
- խորհրդայնացման նախօրյակին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունների միջև Մոսկվայում, Թիֆլիսում և Երևանում ընթացած բանակցությունների վերաբերյալ հայ պատմագրության մեջ առկա գնահատականները,

- ՀայաստանիՀանրապետությանանկմանև խորհրդային կարգերի հաստատման վերաբերյալ հայ պատմագրության մեջ առկա գնահատականները,
- Հայաստանի խորհրդայնացման օրվա խնդրի շուրջ առաջացած գնահատականները,
- Ալեքսանդրապոլի հայ-թուրքական խորհրդաժողովին և պայմանագրին հայ պատմագրության մեջ տրված գնահատականները,
- Երևանի հայ-ռուսական համաձայնագրի, նորահռչակ խորհրդային իշխանությունների կողմից այդ համաձայնագրի խախտման վերաբերյալ հայ պատմագրության մեջ առկա գնահատականները:

Ատենախոսության ժամանակագրական շրջանակը: Ատենախոսությունը որպես քննարկվող թեմա ընդգրկում է Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի վերաբերյալ 1920-2018 թվականների հայ պատմագրության շրջանը: Հայաստանի խորհրդայնացման գործընթացի պատմության շարադրանքը ժամանակագրորեն սկսել ենք 1920 թ. մայիսից և հասցրել մինչև 1921 թ. հունվար՝ նոր իշխանությունների կողմից Երևանի համաձայնագրի խախտման և բռնություններիքաղաքականության իրականացման շրջանը:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքը և ուսումնասիրվածության աստիճանը: Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի ուսումնասիրության համար առկա են բազմաթիվ սկզբնաղբյուրներ և հուշագրական ու պատմագիտական աշխատություններ: Սկզբնաղբյուրները կարելի է բաժանել երկու խմբի՝ չհրատարակված և հրատարակված: Առաջին խմբի սկզբնաղբյուրները պահպանվում են Հայաստանի ազգային արխիվի տարբեր ֆոնդերում (113, 114, 198, 199, 200, 1022, 1253 և այլն): Երկրորդ խմբի սկզբնաղբյուրները տպագիր փաստաթղթերի և նյութերի ժողովածուներն են[1], որոնք արխիվային փաստաթղթերի հետ կազմում են մեր ատենախոսության աղբյուրագիտական հիմքը:

---

[1] Հայկական ՍԽՀ: Օրենքներ և որոշումներ: Հայկական ՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, ամսագիր, Երևան, 1921, նոյեմբեր-դեկտեմբեր, № 13, ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջմիածին, 1921, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920-1930 (Հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Երևան, 1930, Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր, կազմեցին՝ Կ. Ղազարյան և Մ. Ներսիսյան, խմբագրությունը՝ Կ. Ղազարյանի, Երևան, 1932, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ 1902-1921, Երևան, 1960, Սարգսյան Ե., Բ. Լեգրանի միսիան, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, №3, էջ 21-104, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագրությունը՝ Ջ. Կիրակոսյանի, Երևան, 1972, Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու 1920թ. նոյեմբեր-1922թ. հունվար), Երևան, 1974, Մեծ հոկտեմբերի ուղիով (հոդվածների ժողովածու), Երևան, 1977, Գէորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը

Հայաստանի խորհրդայնացման պատմության սկզբնաղբյուրների շարքում պետք է առանձնացնել ժամանակի հասարակական-քաղաքական և կուսակցական գործիչների հուշերը[2], որոնք հիմնականում հրատարակվել են սփյուռքում և մեծ արժեք են ներկայացնում իրենցից, քանի որ այդ հուշերի հեղինակները անմիջական մասնակցություն են ունեցել կատարվող քաղաքական իրադարձություններին: Չնայած այս հուշերը ունեցել են նաև սուբյեկտիվ կողմեր, բայց, այնուամենայնիվ, մեծ է եղել դրանց պատմագիտական արժեքը, քանզի ականատեսի աչքերով ներկայացված փաստերն ու իրադարձությունները բավականին հեշտացնում են ուսումնասիրողների աշխատանքը և հնարավորություն ստեղծում փաստերը համադրելու միջոցով տալ հիմնավոր գնահատականներ:

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի վերաբերյալ ստեղծված պատմագիտական աշխատությունները բազմաթիվ են, ուստի այդ աշխատությունները բաժանել ենք երեք խմբի՝ խորհրդային, սփյուռքի և անկախության շրջանում ստեղծված աշխատություններ: Այս երեք խմբերը ներկայացնող հեղինակները տարբեր կերպ են լուսաբանել ու գնահատել այս հիմնահարցը:

Խորհրդային շրջանում Հայաստանի խորհրդայնացումը հանդիսանում էր ամենաշատ ուսումնասիրված և լուսաբանված թեմաներից մեկը: Չնայած այս շրջանում ստեղծված աշխատությունները կրում են միակողմանի բնույթ, որը իշխող կոմունիստական վարչակարգի հետևանք էր, բայց, անժխտելի է այն, որ այս աշխատությունները փաստական հարուստ նյութ պարունակելու տեսանկյունից մեծ արժեք են ներկայացնում:

1920-ական թվականներին, երբ տակավին խորհրդահայ պատմագրությունը գտնվում էր ձևավորման փուլում, մեկը մյուսի հետևից

(1919-1921), Երևան, 1991, Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., քաղաքական պատմություն (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2000, ՀՅ Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), խմբագրությունը՝ Վլ. Ղազախեցյանի, Երևան, 1999, Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ереван, 1992, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий, т. 2, ч. 1, Москва, 2003, Туманян М., Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг., Ереван, 2012:

[2] Տերտերյան Հ., Հայաստանի Հանրապետութեան և Խորհրդային Ռուսաստանի բանակցութիւնները, Լ. Շանթի պատուիրակութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1954, թիվ 1,էջ 1-14, թիվ 2,էջ 14-26, թիվ 5, էջ 1-15, Իրազեկ Հ., Մօտիկ անցեալից, պատմական դեպքեր և ապրումներ 1917-1922 թթ., Պէյրութ, 1956, Լազեան Գ., Հայաստան և Հայ դատը ըստ դաշնագրերու, Կահիրէ, 1941, նույնի՝ Հայաստան և Հայ դատը. վավերագրեր, Կահիրէ, 1946, նույնի՝ Հայաստան և Հայ դատը. հայ և ռուս յարաբերութիւնների լոյսին տակ, Երևան, 1991, Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. դէպքեր, դէմքեր, ապրումներ, հ. Ե, Պէյրութ, 1966, Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումը եւ զարգացումը, Բեյրութ, 1968, Քիւրքճեան Յ., Ուրուագիծ Հ.Յ.Դ. պատմութեան 1919-1924 հնգամեակի, Աթէնք, 1988, Քաջազունի Հ., ՀՅ Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Երևան, 1994, և այլն:

հրատարակվեցին Աշ. Հովհաննիսյանի[3], Ա. Կարինյանի[4], Լեոյի[5], Հ. Ազատյանի[6], Գ. Աբովի[7],Ա. Խանջյանի[8] և այլոց ուսումնասիրությունները, որոնք հիմնականում գաղափարա-քաղաքական նշանակություն ունեցող գործեր էին և կրում էին կոնյուկտուրային բնույթ: Այս հեղինակները հիմնականում նպատակ են ունեցել բացահայտելու Դաշնակցության «բուրժուական» էությունը, ներկայացնելու Մայիսյան ապստամբության և Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման պատմությունը:

Մասնավորապես, Աշ. Հովհաննիսյանը նշում է, որ նոյեմբերին արդեն Հայաստանում առկա ներքին և արտաքին նպաստավոր պայմանների հետևանքով երկրում ստեղծվել էր հեղափոխական դրություն, ուստի իշխանությունը գրավելու խնդիրը Հայաստանում արդեն իսկ որոշված էր բոլշևիկյան կուսակցության համար[9]:

1920-ական թվականներին հրատարակված աշխատությունների շարքում առանձնանում է Բ. Բորյանի երկհատոր աշխատությունը, որի երկրորդ հատորում հեղինակը բացահայտել է խորհրդա-քեմալական համագործակցության էությունը և անդրադարձել Հայաստանի խորհրդայնացման պատմության շարադրմանը[10]: Իդեպ Բ. Բորյանն այդ շրջանի այն եզակի պատմաբաններից էր, ով փորձել է իր աշխատության մեջ ներկայացնել պատմական ճշմարտությունը:

1930-ական թվականներին Հայաստանի խորհրդայնացման հիմնախնդրի վերաբերյալ արժանահիշատակ են Վ. Պարսամյանի, Մ. Ներսիսյանի, Կ. Ղազարյանի ուսումնասիրությունները[11], որտեղ այս հեղինակները մանրամասն

---

[3] Հովհաննիսյան Ա., Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, «Նորք», գիրք 2, Երևան, 1923, նույնի՝ Դաշնակցության իդեոլոգիայի ընթացիկ կուրսը, «Նորք», գիրք 3, Երևան, 1923, նույնի՝ Դաշնակցությունը և պատերազմը, Երևան, 1924, նույնի՝ Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, նույնի՝ Դաշնակցական Հայաստանի գործերից, «Նորք», գիրք 5-6, Երևան, 1925, նույնի՝ Դաշնակցության սոցիալական ծագումը, «Նորք», գիրք 1, Երևան, 1927, նույնի՝ Դաշնակցության առիթով, Մոսկվա, 1929:

[4] Կարինյան Ա., Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1924, նույնի՝ Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, նույնի՝ Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, նույնի՝ Հին Թուրքիան և թուրքահայությունը, «Նորք», գիրք 1-2, Երևան, 1926, նույնի՝ Նացիոնալիզմի նոր դիրքերը, Մոսկվա, 1929, նույնի՝ Դաշնակցությունը և իր «զինակիցները», Երևան, 1932:

[5] Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:

[6] Ազատյան Հ., Խորհրդային իշխանությունը և միջազգային կապիտալը, «Նորք» գիրք 1, Երևան, 1926:

[7] Աբով Գ., Դաշնակցությունն անցյալում և այժմ, Երևան, 1929:

[8] Խանջյան Ա., Մեր իդեոլոգիական պայքարի հիմնական խնդիրները, Երևան, 1933, նույնի՝ Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակ, Երևան, 1935:

[9] Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը (Նոյեմբերյան հեղափոխության հինգերորդ տարեդարձի առթիվ), Երևան, 1926, էջ 17:

[10] Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, Москва-Ленинград, ч. II, 1929:

[11] Պարսամյան Վ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում (1920թ. նոյեմբերի 29), Երևան, 1932, Ղազարյան Կ., Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում,

ներկայացրել են Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը Առաջին հանրապետության գոյության տարիներին: Նրանք հատկապես պատկերավոր են նկարագրել հայ ժողովրդի ծանր դրությունը՝ ջանք ու եռանդ չխնայելով դա համարելու դաշնակցական կառավարության վարած քաղաքականության արդյունք: Սրան զուգահեռ մեծագույն պաթոսով ներկայացրել են Մայիսյան ապստամբությունը և նրա ունեցած «դերը» հայ աշխատավորական ժողովրդի «ազատագրման գործընթացում»՝ շարադրանքը հասցնելով մինչև «Նոյեմբերյան հեղափոխությունը»:

Անշուշտ, վերոնշյալ հեղինակների ուսումնասիրություններն ընդգծված հակադաշնակցական ուղղվածություն ունեցող գործեր են, որտեղ հեղինակները չեն էլ թաքցրել իրենց սուբյեկտիվ մոտեցումները շատ փաստերի և իրադարձությունների նկատմամբ: Օրինակ՝ Մ. Ներսիսյանը դաշնակցական կառավարությանը դիտում էր որպես «միջազգային իմպերիալիզմի ագենտ» և կարծում, որ Առաջին հանրապետության կառավարությունը գիտակցաբար Հայաստանը դարձնում էր «միջազգային գիշատիչ իմպերիալիզմի թալանների օբյեկտը»[12]:

1940-ական թվականների առաջին կեսին Խորհրդային Հայաստանում տիրապետող դարձած գիտական աշխատանքների հասկանալի դադարը հաղթահարվեց միայն հետպատերազմյան տարիներին: Մասնավորապես 1950-ական թվականներին Հայաստանի խորհրդայնացման հարցին իրենց աշխատություններում անդրադարձան Հ. Էլչիբեկյանը, Գ. Ղարիբջանյանը, Շ. Հարությունյանը, Ծ. Աղայանը, Գ. Գալոյանը, Ս. Վարդանյանը և ուրիշներ[13]: Այս հեղինակների աշխատություններում հիմնականում գովերգվում է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար դերը «աշխատավորության հեղափոխության պայքարում» և նրանց «ազատագրման» գործում՝ Հայաստանի խորհրդայնացման օրն ընդունելով նոյեմբերի 29-ը:

1960-1970-ական թվականներին հրատարակված աշխատությունների շարքում ցանկանում ենք առանձնացնել Ս. Ալիխանյանի աշխատությունները[14]:

«Տեղեկագիր», մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտ, Երևան, 1935, №1,էջ 47-79, Ներսիսյան Մ., Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1935:

[12] Ներսիսյան Մ., նշվ. աշխ., էջ 31:

[13] Эльчибекян А., Установление советской власти в Армении, Ереван, 1954, նույնի՝ Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, Ереван, 1957, Ղարիբջանյան Գ., Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955, Հարությունյան Շ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1957, Աղայան Ծ., Հոկտեմբերյան Ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, Галоян Г., Борьба за Советскую власть в Армении, Москва, 1957, Варданян С., Победа советской власти в Армении, Ереван, 1959:

[14] Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում (1917-1921թթ.), Երևան, 1964, նույնի՝ Գ. Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1974:

«Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում» աշխատության մեջ հեղինակը լուսաբանել է Հայաստանում 1917-1921 թթ. ծավալված իրադարձությունները և հատուկ ուշադրություն դարձրել հայ ժողովրդի «ազատագրման» գործում Խորհրդային Ռուսաստանի ունեցած դերակատարությանը, իսկ «Գ. Կ. Օրջոնիկիձեն և Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում» գրքում ներկայացրել է Անդրկովկասի բոլշևիկների ղեկավար Գ. Օրջոնիկիձեի խաղացած դերը Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման գործում:

Հայաստանի խորհրդայնացման պատմության պատմագրությանն առանձին ուսումնասիրությամբ անդրադարձել է Պ. Մայիլյանը: Նա խորհրդային իշխանության տարիներին «Հայաստանում Սովետական իշխանության հաստատման հարցերի լուսաբանումը սովետահայ պատմագրության մեջ»[15] թեմայով թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել, որի սեղմ տարբերակը նույն տարում առանձին գրքույկով հրատարակվել է՝ «Հայաստանում Սովետական իշխանության հաստատման պրոբլեմը սովետահայ պատմագրության մեջ» վերնագրով: Ատենախոսության մեջ հեղինակը առավել մեծ ուշադրություն է դարձրել 1917 թ. փետրվարից մինչև հոկտեմբեր ընկած ժամանակահատվածի իրադարձությունների լուսաբանմանը, քան բուն խնդրի ուսումնասիրությանը: Նա զարգացնում է խորհրդահայ պատմագրության մեջ տարածված այն թեզը, ըստ որի բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական պայքարի ու Խորհրդային Ռուսաստանի օգնության շնորհիվ Հայաստանում տապալվեց դաշնակցականների «հակաժողովրդական կառավարչակարգը» և հաստատվեց խորհրդային իշխանություն[16]:

Ընդհանրապես խորհրդային իշխանության տարիներին Հայաստանի խորհրդայնացման պատմության պատմագրությանը նվիրված աշխատություններ քիչ են ստեղծվել: Ինչպես արդեն նշեցինք, թեմային նվիրված միակ համակարգված պատմագրական աշխատանքը կատարել է Պ. Մայիլյանը: Նրանից բացի, առանձնանում է նաև Շ. Հարությունյանը, ով դեռևս 1967 թ. հրատարակած «Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում»[17] աշխատության մեջ խորհրդահայ պատմագիտության ձեռքբերումների համատեքստում ներկայացրել է նաև Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի խորհրդահայ պատմագրությունը: Հեղինակն այստեղ վերլուծության է ենթարկել հրապարակի վրա առկա աշխատություններն ու հոդվածները՝ դրանք գնահատելով խորհրդային պատմագրության մշակած ընդունելի հայեցակարգերի համաձայն: 1990 թ.

---

[15] Մայիլյան Պ., Հայաստանում սովետական իշխանության հաստատման հարցերի լուսաբանումը սովետահայ պատմագրության մեջ, պ.գ.թ. գիտական աստիճան հայցելու ատենախոսություն, Երևան, 1974:

[16] Նույն տեղում, էջ 177:

[17] Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում (1920-1963), ուրվագծեր, Երևան, 1967:

հրատարակվում է վերոնշյալ գրքի երկրորդ մասը, որտեղ հեղինակը դարձյալ անդրադարձել է մեր կողմից քննարկվող թեմայի պատմության խորհրդահայ պատմագրությանը[18]:

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի վերաբերյալ աշխատությունների երկրորդ խումբը ստեղծվել է սփյուռքում, որտեղ գերակշռում են դաշնակցական գործիչների ստեղծած աշխատությունները, որոնցում Հայաստանի Հանրապետության անկման գործընթացը դիտարկվում է որպես քեմալա-բոլշևիկյան համագործակցության արդյունք:

Հարկ է նշել, որ սփյուռքահայ պատմագրությանը առավել հատուկ է նկարագրողական բնույթը, այն մեծիմասամբ զերծ է քննական-վերլուծական մոտեցումից, ինչը չենք կարող ասել խորհրդահայ պատմագրության մասին:

1920-ական թվականներից Ս. Վրացյանը[19], Ալ. Խատիսյանը[20] և Ռ. Տեր-Մինասյանը[21]նկատելի աշխատանք կատարեցին Հայաստանի Առաջին Հանրապետության պատմություն ստեղծելու ուղղությամբ:Այս հեղինակները եղել են ժամանակի գործիչներ և նրանց գրքերը գրված են իրադարձությունների ականատեսի աչքերով:

Բարձր գնահատականի է արժանի հատկապես Ս. Վրացյանի «Հայաստանի Հանրապետություն» աշխատությունը, որը հեղինակը շարադրել է ոչ թե կուսակցական դիրքերից, այլ որպես պետական գործիչ: Աշխատությունը բավական տարողունակ է, այն կարելի է համարել դաշնակցական պատմագրության գլուխգործոցը: Այստեղ հեղինակն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության պատմության գրեթե բոլոր խնդիրներին, այդ թվում՝ Հայաստանի խորհրդայնացման գործընթացին: Պետք է նշել, որ Հայաստանի խորհրդայնացմանը Ս. Վրացյանն անդրադարձել է նաև իր մյուս աշխատություններում[22]: Նա Հայաստանի խորհրդայնացումը համարում էր անխուսափելի և նշում, որ 1920 թ. նոյեմբերին Հայաստանն ընկել էր երկու կրակի միջև. մի կողմից թուրքերն էին սպառնալիքով ու վերջնագրերով խոսում, իսկ մյուս կողմից՝ հայ և ռուս բոլշևիկները:

Պակաս արժեքավոր չեն նաև սփյուռքի ոչ դաշնակցական (Ռամկավար, Հնչակյան) կամ նախկին դաշնակցական հեղինակների գործերը[23], որոնք ևս մեծ

---

[18] Հարությունյան Շ., Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում (1964-1988), ուրվագծեր, Երևան, 1990:

[19] Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993:

[20] Խատիսեան Ալ., նշվ. աշխ.:

[21] Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 7, Թեհրան, 1982:

[22] Վրացյան Ս., Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թուրքական սալի միջեւ, Պէյրութ, 1953, նույնի՝ Կեանքի ուղիներով, հ. Ե, Պէյրութ, 1966, նույնի՝ Ինչու՞ և ինչպես խորհրդայնացավ Հայաստանը, Թեհրան, 1982:

[23] Երվանդ Հ., Ռամկավար ազատական կուսակցութիւն. իր այսօրը եւ վաղը, Պօսթըն, 1927, Շահան, Ալէքսանդրապօլի դաշնագրէն. 1930-ի Կովկասեան ապստամբութիւնները (վերագնահատումներ), Մարսէյլ, 1934, Շահան, Երևանի համաձայնագիրը, Բոստոն, 1941, Նաթալի Շ., Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապօլի, Մոսկուայի եւ Կարսի), Պէյրութ, 1957,

կարևորություն են ներկայացնում Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի ուսումնասիրման համար:

Արտերկրում ստեղծված կարևորագույն գործերից է նաև պատմաբան Ռ. Հովհաննիսյանի աշխատությունը[24], որտեղ հեղինակը հանգամանորեն անդրադարձել է մեր կողմից քննարկվող թեմային:

Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցի ուսումնասիրությունը անկախության շրջանում բոլորովին էլ չկորցրեց իր արդիականությունը և շարունակում է մնալ պատմաբանների ուշադրության կենտրոնում: Այս շրջանում գիտական ասպարեզ մտավ պատմաբան-ուսումնասիրողների երրորդ խումբը: Այն արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա սկսեց աստիճանաբար վեր հանել իրադարձությունների իրական ու ճշգրիտ պատմությունը և տալ օբյեկտիվ գնահատականներ: ԽՍՀՄ փլուզումը հայ պատմագիտության առջև նոր ճանապարհներ բացեց, երբ անկախության պայմաններում հայ պատմաբանները սկսեցին ազատորեն գործել: Անկախության շրջանի պատմագրության մեջ կարելի է առանձնացնել պատմաբանների երկու խումբ, որոնցից առաջինում խորհրդահայ պատմագրության ավագ սերնդի ներկայացուցիչներն էին[25], ովքեր շարունակեցին ապրել ու ստեղծագործել նաև հետխորհրդային շրջանում, իսկ երկրորդում՝ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները[26]:Վերջիններն անկախության

Ավետեան Մ., Հայ ազատագրական ազգային յիսնամեա յուշամատեան և Զօր. Անդրանիկ, Փարիզ, 1954, Եափուճեան Ա., Ո՞վ կազմակերպեց փետրուարեան արկածախնդրութիւնը եւ ինչ եղավ անոր հետեւանքը, Գահիրէ, 1969, Վեհապետյան Թ., Նոր սերունդը՝ քաւութեան նոխազ, Պէյրութ, հ. Ա, 1988, հ. Բ, 1985, Գանգրունի Հ., Դաշնագիրները դաւեցին հայոց 1918-1923, Պէյրութ, 1992, Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրերէն, Երևան, 2003:

[24]ՀովհաննիսյանՌ., ՀայաստանիՀանրապետություն, Սալիևմանգաղիմիջև. Մասնատումևխորհրդայնացում, հ. 4, Երևան, 2016:

[25] Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան-Ռուսաստան-Թուրքիա, Երևան, 1995, Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, նույնի՝ Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», Երևան, 2002, նույնի՝ Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006:

[26] Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1992, նույնի՝ Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920), Երևան, 2005, նույնի՝ Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, նույնի՝ Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում, Երևան, 2016, նույնի՝ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Երևան, 2018, Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, Գևորգյան Հ., Դրո, Երևան, 1999, Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, նույնի՝ Զանգեզուրի գոյամարտը 1917-1921 թթ., Երևան, 2017, Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, նույնի՝ Հայաստանը համաշխարհային հեղափոխության արևելյան խաչմերուկում, Երևան, 2007, Ներսիսյան Ա., Կարո Սասունի,

պայմաններում փորձեցին նորովի ներկայացնել և գնահատել Հայաստանի խորհրդայնացման հիմնահարցը:

Առաջին խմբի հեղինակների հետ կապված անհրաժեշտ է նշել, որ նրանք հիմնականում ունեցել են հայեցակարգ փոխելու խնդիր, հիմնովին վերանայել են նախորդ շրջանում իրենց զարգացրած տեսակետները, մինչդեռ երկրորդ խմբի ներկայացուցիչները նման խնդիր գրեթե չեն ունեցել:

Ընդհանուր առմամբ անկախության շրջանի պատմագրության մեջ գերիշխող է այն տեսակետը, որ Հայաստանի խորհրդայնացումը տեղի է ունեցել խաղաղ և կամավոր, առանց դիմադրության և առանց ռազմական ընդհարման[27]:

Հայաստանի խորհրդայնացման գործընթացի, Հայհեղկոմի վարած բռնությունների քաղաքականության վերաբերյալ հայ պատմագրության և սփյուռքի հասարակական-քաղաքական շրջանակների գնահատականների համակարգված ներկայացման գործում անկախության շրջանի պատմագրության մեջ շնորհակալ գործ են կատարել պրոֆեսորներ Ա. Հակոբյանը և Խ. Ստեփանյանը[28]:

Ատենախոսության շարադրման ժամանակ բավարար չափով օգտագործել ենք նաև պարբերական մամուլի նյութեր, որոնք նույնպես կարևորություն են ներկայացնում և ունեն սկզբնաղբյուրի արժեք:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմահամեմատական և պատմաքննական մեթոդաբանությամբ:Աշխատել ենք զերծ մնալ կուսակցական կանխակալ մոտեցումից և նախասիրություններից: Պատմագիտական գրականության քննական վերլուծությունը կատարվել է՝ պահպանելով պատմականության ու անաչառության սկզբունքները:

Ատենախոսության գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության գիտական նորույթը մեծապես կայանում է նրանում, որ Հայաստանի խորհրդայնացման պատմության հիմնահարցերի ուսումնասիրման վերաբերյալ մինչ այժմ ամբողջական ու համակարգված պատմագրական վերլուծություն չի կատարվել: Սույն ատենախոսությունը հայ պատմագրության մեջ առաջին աշխատանքն է, որտեղ փորձ է արվել հանրագումարի բերել Հայաստանի

Երևան, 2004, նույնի՝ Զորավար Սեպուհ, Երևան, 2005, նույնի՝ Ռուբեն, Երևան, 2007, Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, Ղարիբյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը 1918-1920 թվականներին և Մեծ Բրիտանիան, Երևան, 2012, Ստեփանյան Խ., 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառները և հետևանքները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Երևան, 2016:

[27] Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 49, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 330:

[28] Տե՛ս Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմությանն հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2014, Ստեփանյան Խ., 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառները և հետևանքները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Երևան, 2016:

խորհրդայնացման հիմնահարցի վերաբերյալ խորհրդային, սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագրության մեջ առկա գնահատականները:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ Հայաստանի խորհրդայնացման պատմության հիմնահարցի վերաբերյալ հայ պատմագրության արդյունքների հանրագումարը կարող է նպաստել հայոց նորագույն շրջանի պատմության պատմագրությամբ զբաղվողներին՝ պատկերացում կազմելու իրենց հետաքրքրող հիմնահարցերի ուսումնասիրության աստիճանի և ուրվագծվող անելիքների մասին: Ատենախոսությունը իր գործնական նշանակությամբ օգտակար կլինի հայ-ռուսական հարաբերությունների պատմությամբ և պատմագրությամբ հետաքրքրվողներին: Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել նաև բուհական «Հայոց պատմություն», «Հայոց պատմության պատմագրություն» դասընթացների դասավանդման ժամանակ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նորագույն պատմության բաժնի կողմից:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ չորս ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 195 էջ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակեցված հետազոտության ժամանակագրական շրջանակները, նպատակն ու խնդիրները, ներկայացված են աշխատանքի գիտական նորույթը, հիմնախնդրի սկզբնաղբյուրների և գիտական գրականության վերլուծությունը:

Առաջին գլուխը՝ «Խորհրդայնացման նախօրյակին Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջպետական հարաբերությունների պատմության պատմագրություն», բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Հայաստանի խորհրդայնացման գործընթացի սկզբի գնահատականը հայ պատմագրության մեջ**», ներկայացված են հայ պատմագրության մեջ Մայիսյան ապստամբությանը տրված գնահատականները: Մայիսյան ապստամբությունը, լինելով Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության վիճահարույց հիմնահարցերից մեկը, մշտապես եղել է պատմագրության ուշադրության կենտրոնում և արժանացել է հակասական գնահատականների:

Խորհրդահայ պատմագրության մեջ այն որակվել է որպես «սոցիալիստական շարժում»[29], «կիսակազմակերպ, տարերային, մասսայական

[29] Վանանդեցի Գ., Մայիսյան ապստամբության գնահատման փորձի առթիվ, «Կոմմունիստ», Երևան, 1927, թիվ 6, էջ 61:

ապստամբություն»[30], «հայ աշխատավորների տարերային մի հոսանք, բնազդական մի ճիչ»[31], «բանվորների և գյուղացիության հեղափոխական վերելքի կարևոր էտապներից մեկը»[32], ավելի ուշ՝ որպես «քաղաքացիական պատերազմի դպրոց»[33], «մասսայական համաժողովրդական ապստամբություն»[34], «համաժողովրդական զինված ապստամբություն»[35], «Հայաստանում քաղաքական իշխանությունը գրավելու նախապայման»[36], «աշխատավորության ռևոլյուցիոն սխրագործություն»[37] և այլն:

Սփյուռքահայ, մասնավորապես դաշնակցական պատմագրության մեջ այն դիտարկվել է իբրև «եղբայրասպան քաղաքացիական պատերազմի ու զինված ապստամբության միջոցով Հայաստանի անկախությունը խորտակելու և պետական իշխանությունը հափշտակելու փորձ»[38], «հարված նոր կազմավորված և ամրապնդվող հանրապետության թիկունքին»[39]: Ինչ վերաբերում է անկախության շրջանի պատմաբաններին, ապա վերջիններս մայիսյան ապստամբությունը համարել են որպես «հարված հայկական պետականության թիկունքից»[40], «վաղաժամ, լավ չնախապատրաստված և չկազմակերպված ապստամբություն, արկածախնդրություն»[41], «քաղաքացիական պատերազմ»[42], «հակապետական շարժում»[43], «խռովություն»[44] և այլն:

---

[30] Ամիրխանյան Շ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920 թ.). գնահատության փորձ, Մոսկվա, 1926, էջ 165:

[31] Կարինյան Ա., Հայ ազգայնականների ուղին, էջ 91:

[32] Կարինյան Ա., Դաշնակցությունը և իր զինակիցները, էջ 81:

[33] Ղարիբջանյան Գ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1955, էջ 5, Հարությունյան Շ., Հոկտեմբերյան ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1957, էջ 16, Эльчибекян А., Установление советской власти в Армении, с. 101, նույնի՝ Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, с. 156:

[34] Կարապետյան Հ., Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1961, էջ 278:

[35] Գալոյան Գ., Մայիսյան հերոսական ապստամբությունը, Երևան, 1960, էջ 3, նույնի՝ Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, էջ 3, նույնի՝ Борьба за советскую власть в Армении, с. 175:

[36] Ավետիսյան Հ., Մայիսյան ապստամբությունը կոմինտերնի նյութերում (1920 թ. մայիս-սեպտեմբեր), Երևան, 1981, էջ 17:

[37] Վարդանյան Հ., Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից 1903-1920 թթ., Երևան, 1962, էջ 197:

[38] Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի միջև, էջ 95, նույնի՝ Հայաստանի Հանրապետություն, էջ 441:

[39] Փիրումեան Ռ., Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921) թթ., Երևան, 1997, էջ 170:

[40] Սիմոնյան Ա., 1920 թ. մայիսյան ապստամբությունը և նրա արձագանքները Զանգեզուրում, «Բանբեր Երևանի համալսարանի», 1(94), Երևան, 1998, էջ 20:

[41] Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920 թ.) // «Դրօշակ», 2001, թիվ 2, էջ 136:

Այստեղ քննության է առնվում իշխանությունը մայիսին բոլշևիկներին չհանձնելու և երկրում խորհրդային կարգեր չհաստատվելու պատճառները: Ցույց է տրվում, որ մայիսյան ապստամբությունը պարզապես հայ բոլշևիկների սեփական նախաձեռությունն էր:

Երկրորդ ենթագլխում՝ **«Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունների գնահատականը հայ պատմագրության մեջ»,** ներկայացված է Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի պատվիրակությունների միջև 1920 թ. ամառ-աշուն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած բանակցությունների գնահատականները: Այս բանակցությունների հետ կապված տարբեր են և հակասական խորհրդային, սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագիր և հուշագիր հեղինակների տեսակետները:

Ցավոք, բարեհաջող սկսված այդ բանակցությունները գործնականում արդյունքի չհանգեցրին, կողմերն ընդհանուր համաձայնության չգալով՝ ձախողեցին բանակցությունները Մոսկվայում՝ դրանք Երևանում վերսկսելու հեռանկարով: Թուրքական պատվիրակության Մոսկվա ժամանելուց անմիջապես հետո Խորհրդային կառավարության առաջարկով ընդհատվեցին հայ-ռուսական բանակցությունները և որոշվեց Հայաստան պատվիրակություն ուղարկել ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի գլխավորությամբ, ով պետք է բանակցեր և զինադադարի ու խաղաղության դաշնագիր կնքեր Հայաստանի Հանրապետության կառավարության հետ[45]: Երևանում հայ-ռուսական բանակցությունները վերսկսվեցին հոկտեմբեր ամսին, իսկ մինչ այդ Լեգրանը հայկական մեկ այլ պատվիրակության հետ Թիֆլիսում օգոստոսի 10-ին ստորագրում է համաձայնագիր, որից հետո միայն ժամանում Երևան:

Երևանում վերսկսված բանակցություններնավարտվում են հոկտեմբերի 28-ին հայ-ռուսական համաձայնագրի նախագծի ստորագրմամբ, որը, սակայն, մերժվում է նոյեմբերի 4-ին Բաքվում գումարված ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի միացյալ նիստում: Այս ամենից հետո կրկին Երևան է ժամանում Բ. Լեգրանը, բայց այս անգամ Հայաստանի խորհրդայնացման գործը տրամաբանական ավարտին հասցնելու համար:

Երկրորդ գլուխը՝ «**Հայաստանի Հանրապետության անկման և խորհրդայնացման պատմության պատմագրություն»,** բաղկացած է կրկին երկու ենթագլխից:

---

[42] Բաբաջանյան Վ., Միջկուսակցական հարաբերությունները Հայաստաի Հանրապետությունում բոլշևիկյան հակապետական ելույթների և դրանց հետևանքների հաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս), Երևան, 2006, էջ 3:

[43] Ներսիսյան Ա., Ռուբեն, էջ 323:

[44] Եղիազարյան Ա., ՀՀ-ում 1920 թ. բոլշևիկների մայիսյան ելույթների և դրանց գնահատականի շուրջ// «Դրօշակ», 2009, թիվ 5, էջ 24:

[45] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 612, թ. 1:

Առաջին ենթագլխում՝ «**Հայաստանի Հանրապետության անկման պատմության պատմագրություն**»,ներկայացվածև վերլուծության են ենթարկված Հայաստանի Առաջին Հանրապետության անկման վերաբերյալ հայ պատմագրության մեջ առկա գնահատականներն ու տեսակետները: Խորհրդահայ պատմագրության հիմնական տեսակետը այս հարցում այն էր, որ Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին «ապստամբ ժողովրդի կամքով և ցանկությամբ», սփյուռքահայ հեղինակների պնդմամբ խորհրդայնացումը տեղի է ունեցել արտաքին ուժերի ճնշման տակ դեկտեմբերի 2-ին: Անկախության շրջանի հեղինակների հիմնական գնահատականն այս հարցում այն է, որ խորհրդայնացումն անխուսափելի էր և կատարվեց արտաքին ուժի միջամտությամբ, որի արդյունքում ՀՅԴ-ն հարկադրված դեկտեմբերի 2-ին իշխանությունը կամավոր հանձնեց բոլշևիկներին:Թուրք-հայկական պատերազմում պարտված Հայաստանը չուներ այլընտրանք, ուստի ստիպված խորհրդայնացավ, իսկ այդ պատերազմի արդյունքներն ամփոփվեցին Ալեքսանդրապոլի խորհրդաժողովում:

Հայ ժողովրդի նորագույն պատմության վիճահարույց հիմնահարցերից մեկը հանդիսացող Ալեքսանդրապոլի պայմանագիրը պատմագրության մեջ դարձյալ արժանացել է տարաբնույթ գնահատականների: Խորհրդահայ պատմագրության մեջ այն միանշանակ քննադատվել է, իսկ դաշնակցական պատմագրությունը փորձել է հիմնավորել այդ պայմանագիրը ստորագրելու անխուսափելիությունն առ այն, որ դրա չստորագրման պարագայում թուրքերը կշարժվեին Երևանի վրա:Ինչ վերաբերվում է սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակներին, ապա նրանք իրենց կոշտ գնահատականներով քիչ են զիջել խորհրդահայ հեղինակներին՝ այս հանգամանքը առավել շատ օգտագործելով ՀՅԴ-ին վարկաբեկելու և հանրապետության կործանման մեղքը վերջինիս վրա բարդելու համար:Իսկ ահա անկախության շրջանի պատմագրության ներկայացուցիչները հետզհետե վերանայում են հայ ժողովրդի պատմական ճակատագրում բախտորոշ դեր խաղացած այս պայմանագրի հետ կապված խնդիրները և փորձում տալ նոր գնահատականներ:

Երկրորդ ենթագլխում՝ «**1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի գնահատականը հայ պատմագրության մեջ»,** վերլուծված են Երևանի պայմանագրին տրված գնահատականները:

Դաշնակցական պատմագրության մեջ գերիշխում էր այն տեսակետը, ըստ որի Երևանի համաձայնագրով դաշնակցականներն ինքնակամ իշխանությունը հանձնել են բոլշևիկներին, իսկ խորհրդահայ պատմաբանները պնդում էին հակառակը՝ Երևանի համաձայնագիրը դիտելով որպես դաշնակցականների կապիտուլյացիայի ակտ: Փաստը մնում է այն, որ 1920 թ. դեկտեմբերի 2-իԵրևանի համաձայնագրով իշխանությունը խաղաղ կերպով ՀՅԴ-ից անցավ բոլշևիկներին: Սակայն իշխանության գլուխ անցած Հայհեղկոմը ամենևին էլ հավատարիմ չմնաց այդ համաձայնագրի կետերին և հենց նույն օրն էլ անտեսվեց այն: Շուտով ողջ երկրով մեկ սկսվում ենհետապնդումներ և բռնություններ իրականացվել նախկին կառավարության անդամների, քաղաքական կուսակցությունների, հայկական

բանակի նախկին զորահրամանատարական անձնակազմի, ինչպես նաև հասարակ բնակչության նկատմամբ: Ահա հենց այս բռնաճնշումների քաղաքականության արդյունքում էլ բռնկվեց Փետրվարյան ապստամբությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսության հիմնական դրույթներն ու արդյունքներն ամփոփված են հետևյալ եզրակացություններում.

- Հայ պատմագրության մեջ «հերոսական ու ժողովրդական» որակվող և «զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու փորձ» դիտարկվող մայիսյան ապստամբությունը համարում ենք հայ բոլշևիկների սեփական նախաձեռնությունը, որովհետև խորհրդային կառավարության կամ հայ բոլշևիկների կողմից որևէ դիմում Հայաստանի Հանրապետության կառավարությանն իշխանությունը հանձնելու վերաբերյալ չի եղել, իսկ նման պայմաններում, կարծում ենք, Հայաստանի իշխանություններն այդքան հեշտությամբ չէին հրաժարվի անկախությունից:
- Հայ պատմագրության մեջ հակասական գնահատականների արժանացած Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունների միջև ընթացած բանակցությունների վերաբերյալ անիրատեսական ենք համարում 1920 թվականի հունիս-հուլիս ամիսներին հայ-ռուսական պայմանագրի ստորագրումը, որովհետև Խորհրդային Ռուսաստանը դեռևս չէր կողմնորոշվել Թուրքիայի, Ադրբեջանի և Հայաստանի տարածքային պահանջներին լուծում տալու հարցում:
- Խորհրդահայ պատմագրության մեջ հայ-ռուսական բանակցությունների տապալման վերաբերյալ զարգացվել է այն տեսակետը, թե բանակցությունները ձախողվել են դաշնակցական կառավարության և Անտանտի պետությունների մեղքով: Սրան զուգահեռ սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագրության մեջ զարգացվել է այն իրավացի տեսակետը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը դարձավ խորհրդա-քեմալական համագործակցության զոհ: Մենք նույնպես հակված ենք ընդունելու անկախության շրջանի, մասամբ նաև սփյուռքի պատմագրության մեջ ընդունելի այն տեսակետը, ըստ որի բանակցությունների ձախողմանը նպաստեցին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները հայ բոլշևիկների հետ միասին և Մոսկվայում գտնվող քեմալական պատվիրակությունը:
- Խորհրդահայ պատմագրության մեջ դրական քայլ դիտվող օգոստոսի 10-ի համաձայնագիրը սփյուռքահայ պատմագրության մեջ համարվել է հաշտության ժամանակավոր փաստաթուղթ, իսկ անկախության շրջանի պատմագրության մեջ խորհրդային կողմի դիվանագիտական հաջողություններից մեկը: Մեր կարծիքով այն փոխզիջում էր, ինչն ազդարարում էր կարճատև պատերազմի ավարտը և ինչ-որ տեղ դիվանագիտական հաջողություն Հայաստանի համար, քանի որ վիճելի համարվող տարածքները ժամանակավորապես ռազմակալվեց Խորհրդային Ռուսաստանի կողմից՝ առաջիկայում պայմանագիր ստորագրելու և դրանց կարգավիճակը հստակեցնելու հեռանկարով: Ցավոք, խախտվեց այս համաձայնագիրը, ինչում Հայաստանը շահագրգռված չէր, որովհետև բավարար

ուժեր չուներ կռվելու և ձգտում էր հասնել իր անկախության ճանաչմանը Խորհրդային Ռուսաստանի կողմից:

- Հայ պատմագրության մեջ տարաբնույթ գնահատականների արժանացած Երևանում շարունակվող հայ-ռուսական բանակցությունները և դրա արդյունքում ստորագրված հոկտեմբերի 28-ի համաձայնագրի նախագիծը անիրատեսական ենք համարում, քանի որ արդեն օրակարգ էր մտցվել Հայաստանի խորհրդայնացման հարցը, իսկ Բորիս Լեգրանը իր խոստումներով պարզապես ժամանակ էր ձգում Երևանում:
- 1920 թ. նոյեմբերին արտաքին ուժերի ճնշման ներքո Հայաստանի Հանրապետության իշխանությունները տեղի տվեցին և իշխանությունը ստիպված դեկտեմբերի 2-ին հանձնեցին բոլշևիկներին: Հայաստանի Առաջին Հանրապետության իշխանությունները այլ տարբերակ չունեին, քանզի Հայաստանի խորհրդայնացումն անխուսափելի էր: Խորհրդա-քեմալական ջերմ հարաբերությունների պայմաններում բացառվում էր Հայաստանի Հանրապետության հետագա գոյատևումը, իսկ երկրի խորհրդայնացումը՝ դառնում իսկապես ժամանակի խնդիր:
- Ըստ Երևանի հայ-ռուսական համաձայնագրի՝ Խորհրդային Ռուսաստանը և Խորհրդային Հայաստանը դառնում էին դաշնակիցներ, քանզի համաձայնագրի 7-րդ հոդվածը պարտավորեցնում էր Խորհրդային Ռուսաստանին անմիջապես կենտրոնացնելու ուժեր՝ Խորհրդային Հայաստանի պաշտպանությունն իրականացնելու համար:
- Չնայած Հայաստանը ստիպված, արտաքին ուժերի միջամտության արդյունքում խորհրդայնացվեց, բայց դա տեղի ունեցավ առանց իրավական սկզբունքի խախտման: Հայաստանի խորհրդայնացումով իր տրամաբանական ավարտն ունեցավ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որով դրվեց խորհրդային սոցիալիստական հանրապետության սկիզբը, ասել է, թե ծնվեց Հայաստանի Երկրորդ Հանրապետությունը, որը, փաստորեն, համարվում է նախորդ հանրապետության իրավահաջորդը:
- Հայաստանի խորհրդայնացման գործընթացին զուգահեռ ընթացած Ալեքսանդրապոլի խորհրդաժողովը և դրա արդյունքում ստորագրված պայմանագիրը դարձյալ պատմագրության մեջ արժանացել է հակասական գնահատականների: Ալեքսանդրապոլի բանակցությունները և դրա արդյունքում թուրքական կողմի ներկայացրած վերջնագիրը արագացրեցին Հայաստանի խորհրդայնացման գործընթացը: Այդ վերջնագիրը դաշնակցական կառավարության բոլոր հույսերը՝ անկախությունը պահելու և իշխանությունը չհանձնելու վերաբերյալ, հօդս ցնդեցրեց: Ալ. Խատիսյանը, անշուշտ, կարող էր չստորագրել այդ պայմանագիրը, բայց չունեցավ այդ քաղաքական քաջությունը և չգնաց այդ քայլին: Հավանաբար նա ստորագրեց այդ պայմանագիրը այն գիտակցումով, որ դա իրավական ուժ չի կարող ունենալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանում ընթանում էին Դրո-Լեգրան բանակցությունները:

- Երևանում ստորագրված հայ-ռուսական համաձայնագիրը Հայհեղկոմի կողմից չհարգվեց և չընդունվեց: Իշխանության գալուց անմիջապես հետո հայ բոլշևիկները սկսեցին խախտել նրա կետերը և իրականացնել բռնագրավումների քաղաքականություն, ինչը խոր դժգոհություն առաջացրեց բնակչության շրջանում: Հայհեղկոմի վարած այդ քաղաքականության արդյունքում բռնկվեց փետրվարյան ապստամբությունը, որն էլ ընթացքում վերաճեց քաղաքացիական կռվի: Ինքնին բնական էր, որ խորհրդահայ պատմագրությունը պիտի պաշտպաներ Հեղկոմի վարած քաղաքականությունը, իսկ ինչ վերաբերում է դաշնակցական պատմագրությանը, ապա այն շատ հարցերում իրավացի էր, երբ քննադատում էր Հեղկոմի քաղաքականությունը: Ոչ միանշանակ է եղել սփյուռքի ոչ դաշնակցական հեղինակների կարծիքները, որոնք որոշ հարցերում պաշտպանել, որոշ հարցերում քննադատել են այդ քաղաքականությունը, իսկ ահա անկախության շրջանի պատմագրության մեջ Հեղմոկի վարած քաղաքականությունը հիմնականում քննադատվել է: Իսկապես քննադատելի էր այդ քաղաքականությունը, քանի որ նորահռչակ իշխանություններն անտեսելով ու առհամարելով Երևանի համաձայնագիրը՝ սկսեցին բռնությունների քաղաքականություն իրականացնել երկրի գրեթե բոլոր ոլորտներում, ինչի արդյունքում առաջացած ժողովրդական խոր դժգոհությունները հիմք հանդիսացանառաջիկա ապստամբության համար:
- Խորհրդային, սփյուռքի և անկախության շրջանի հայ պատմագրությունը, թեև տարբեր մոտեցումներ ու էական տարբերություններ ունի քննարկվող խնդիրների վերաբերյալ, բայց, այնուամենայնիվ, մեծ աշխատանք է կատարել Հայաստանի խորհրդայնացման պատմության հիմնահարցի համակողմանի ուսումնասիրման, քննարկման և վերլուծության ուղղությամբ: Թեև խորհրդահայ և սփյուռքահայ պատմագիտությունը հիմնականում քաղաքականացված է եղել, բայց պետք է խոստովանել, որ նրանց կողմից կարևորագույն ներդրում է կատարվել և լուրջ հիմքեր ստեղծվել քննարկվող թեմայի համար:
- Ներկայումս պարզապես անհրաժեշտություն է այս հիմնահարցը ներկայացնելու գիտական բարեխղճությամբ ու անաչառությամբ: Անկախության շրջանում Հայաստանում գործող պատմաբանները հետզհետե վերանայում են նախկինում եղած հակասական և իրարամերժ տեսակետերն ու տրված գնահատականները և փորձում տալ անկողմնակալ, ժամանակի պատմագիտությանը համահունչ, նորահայտ փաստերով հիմնավորված գիտական գնահատականներ:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Լևոն Շանթի պատվիրակության գործունեության գնահատականը հայ պատմագրության մեջ,«Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1(13), Երևան, 2016, էջ 47-64:
2. Ալեքսանդրապոլի պայմանագիրը հայ պատմագրության մեջ, «Արևելագիտության հարցեր», թիվ 12, Երևան, 2016, էջ 139-157:
3. Հայաստանի խորհրդայնացման մայիսյան փորձի գնահատման շուրջ, «Հայագիտության հարցեր», թիվ 1(10) Երևան, 2017, էջ 63-74:
4. 1920թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի գնահատականը հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր», թիվ 3(12) Երևան, 2017, էջ 97-111:
5. Հայաստանի Առաջին Հանրապետության անկման պատմության պատմագրության շուրջ, «Ակունք», գիտական հոդվածների ժողովածու, թիվ 3(19), Երևան, 2018, էջ 81-90:
6. Լեռնային Ղարաբաղի խորհրդայնացման հիմնահարցի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի»,Հայագիտություն, թիվ 1(25), Երևան, 2018, էջ 67-75:
7. «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության գնահատականը հայ պատմագրության մեջ, «Հայագիտության հարցեր» 1(16), Երևան, 2019, էջ 191-199:

АзатянАра Камоевич
Проблема советизации Армении в армянской историографии

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”

Защита состоится 17-ого ноября 2020 г., в 14^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. М. Баграмяна 24/4).

Резюме

Диссертация посвящена одному из важнейших событий в современной армянской истории - проблеме советизации Армении. Он всегда был в центре внимания армянской историографии, вокруг изучения которой сформировалась богатая литература. Не смотря на этот факт, до сих порне погас интерес научного сообщества к этому вопросу. Советизация Армении всегда была политизирована в атмосфере непримиримой идейно-политической борьбы между АРФД и большевиками, в результате которой возникли противоречивые оценки по этому вопросу.

После распада СССР, в период независимости армянская историческая мысль вступила в новый этап. В область историографии пришла новая группа историков-исследователей, которые начали давать объективную оценку событиям прошлого на основе вновь обнаруженных архивных документов. Несмотря на тот факт, что о проблеме советизации Армении как в советский, так и в постсоветский период было написано много, мы полагаем, что ее исследование и исторический анализ не только не утратили свое научное значение, но и остаются весьма актуальными. До сегодняшнего дня не было проведено полное исследование истории вышеупомянутого вопроса, представляющего армянскую историографию советского периода, диаспоры и периодов независимости, поэтому данная диссертация призвана восполнить этот пробел.

Нашей целью было представить, проанализировать, прокомментировать результаты и оценки исследований, проведенных в армянской историографии по вопросу советизации Армении в соответствии с историческими принципами и методами, выявить ошибки, недостатки и упущения, а также обозначить возможные тенденции для дальнейших исследований.

Научная новизна диссертации состоит в том, что до сих пор не проведен полный и систематический историографический анализ по изучению вопросов истории советизации Армении.

Диссертация состоит из введения, двух глав, заключения, списка использованных источников и литературы.

Во введении представлены актуальность темы, хронологический объем исследования, цель и задачи исследования, научная новизна и значимость работы, анализ источников и научной литературы.

В первой главе "Историография истории межгосударственных отношений Советской России и Республики Армения накануне советизации" представлены оценки Майского восстания а также его историографический анализ. В этой главе также представлена история переговоров между делегациями Республики Армения и Советской России в Москве, Тбилиси и Ереване накануне советизации Армении.

Вторая глава, "Историография истории падения Республики Армения и и его советизации", подробно представляет историю установления советской власти в Армении, армяно-российского соглашения в Ереване, Александропольского договора и политики, проводимой Армянским революционным комитетом.

В выводах диссертации обобщены основные результаты и выводы исследования.

AzatyanAra Kamo

The Problem of Sovietization of Armenia in Armenian Historiography

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "Historiography, Source Study" 07.00.05

The defense of the dissertation will be held on November 17, 2020, at 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SCC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, 24/4, Marshal Baghramyan ave., Yerevan,).

SUMMARY

The dissertation is dedicated to one of the most important events in the history of the modern Armenian period, the issue of the sovietization of Armenia. It has always been in the center of attention of Armenian historiography, around the study of which a rich literature has been formed, but so far the scientific community has not lost interest in the issue. The sovietization of Armenia has always been politicized in the ARF-Bolshevik ideological-political uncompromising struggle atmosphere. As a result it caused contradictory assessments on this issue.

After the collapse of the USSR, during the period of independence, the Armenian historical thought entered a new stage. A new group of historians-researchers came to the field of historiography, who began to give an unbiased assessment of the events of the past on the basis of newly discovered archival documents. Despite the fact that much has been written about the Sovietization of Armenia in both the Soviet and post-Soviet periods, we believe that its study of "historical analysis" has not only not lost its scientific significance, but also continues to be relevant. So far, no concise study of the history of the above-mentioned issue has been made, representing the Armenian historiography of the Soviet, Diaspora, and Independence periods, so this dissertation comes to fill that gap. Our goal was to present, analyze, interpret the results and assessments of the studies conducted in Armenian historiography on the issue of Sovietization of Armenia in

accordance with the historical principles and methods, to identify the mistakes, shortcomings and omissions, as well as to outline possible tendencies for the further studies. The scientific novelty of the dissertation is that so far no complete and systematic historiographical analysis has been made on the study of the issues of the history of Sovietization in Armenia.

The dissertation consists of an introduction, two chapters, a conclusion, and a list of used sources and literature.

The introduction presents the relevance of the topic, the chronological scope of the research, the purpose and objectives of the study, the scientific novelty and significance of the work, the analysis of the sources and the scientific literature.

The first chapter, "Historiography of the History of the Interstate Relations between the Republic of Armenia and Soviet Russia on the Eve of Sovietization", presents the assessments given to the May Uprising and analyzes them in historiography. This chapter also presents the historiography of history of the negotiations between the delegations of the Republic of Armenia and Soviet Russia in Moscow, Tbilissi and Yerevan on the eve of the sovietization of Armenia.

The second chapter, "Historiography of the History of the Fall of the Republic of Armenia and Sovietization", presents in detail the historiography of the Soviet regime establishment in Armenia, the Armenian-Russian agreement of Yerevan, the Alexandropol Treaty, and the Armenian Revolutionary Committee's policy.

The main results and conclusions of the study are summarized in the conclusions' section of the dissertation.